ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

ԴԱՐՁՅԱԼ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Շառոյանը արժեքավորելով մեր մենագրությունը[1], միաժամանակ քննադատական դիտողություններ է արել նրանում արծարծված ագրարային վերափոխումների հարցերի վերաբերյալ։

Նա նշում է, թե, իբր, մենք շրջանցել ենք 1920-ական թվականներին հանրապետության պաշտոնական որոշ շրջաններում տարածված ու վավերագրերում տեղ գտած այն անհիմն վարկածը, ըստ որի Սովետական Հայաստանում հողաղուրկ և սակավահող գյուղացիությունը հողաբաժնով բավարարվել է միջակ գյուղացիության հաշվին։

Պարզաբանելով մեկ շնչին հասնող հողաբաժնի չափը, մեր աշխատության մեջ առաջադրել ենք այն հարցը, թե որքանով է ավելացել այն և, եթե ավելացում եղել է, ապա ում հաշվին։ Այս հարցի վերաբերյալ, այնուհետև ասված է գրքում, 1920-ական թվականներին շրջանառության մեջ են եղել նաև սխալ տվյալներ[2]։ Ապա բերելով մեկ շնչին հասնող հողաբաժնի վերաբերյալ համապատասխան տվյալները, դրա հետ մեկտեղ բացատրել ենք, թե ինչու գյուղացու հողաբաժինը պետք է անպայման ավելացած լինի և կոնկրետ, մեկ առ մեկ ցույց ենք տվել, թե ում հաշվին է ավելացել գյուղացու միջին հողաբաժինը։ Գյուղացու հողապահովվածությունն աճեց կալվածատիրական հողերի, կուլակների շնչաբաժին նորմայից ավելի հողի, ամառային արոտավայրերի, ինչպես նաև «հողառատ» շրջանների ու գյուղերի, լքյալ բնակավայրերի, հողաշինարարության օգնությամբ խտացում կատարելու և այլ միջոցներով։ Փաստական նյութի հիման վրա, որը շարադրված է աշխատության 156—158 էջերում, հանգել ենք հետևյալ եզրակացությանը. «Ամփոփելով բերված փաստարկները, կարելի է նշել, որ Հայաստանի հողազուրկ և սակավահող գյուղացիները հող ստացան նախկին կալվածատերերի ու պետական ֆոնդի հաշվին և հողահավասարեցում կատարելու միջոցով («հողառատ» շրջաններ ու գյուղեր, կուլակներ և այլն)։ Սոցիալ-տնտեսական և քաղաքական մեծ նշանակություն ունեցող այդ գործի իրականացումը հնարավոր էր միայն սովետական իշխանության պայմաններում, հողի մասնավոր սեփականությունը վերացնելու և այն ազգայնացնելու շնորհիվ»[3]։ Բացի այդ,

---

1 Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ., Երևան, 1975։

2 Նույն տեղում, էջ 156։

3 Նույն տեղում, էջ 158։

գրքում կարելի է կարդալ նաև հետևյալ տողերը. «Նախապատերազմյան շրջանի համեմատությամբ սովետական իշխանության տարիներին գյուղացիների միջին հողապահովվածության ավելացումը անկասկած է, իսկ հակառակ տեսակետը՝ թյուրիմացություն»[4]։ Ավելին, գրել ենք նաև այն մասին, որ այդ հարցը մեր պատմագրության մեջ առաջինը բարձրացրել է Գ. Շառոյանը և տվել ճիշտ պատասխան[5]։

Հետևաբար, անընդունելի է այն դիտողությունը, թե իբր մենք շրջանցել կամ հարևանցիորեն ենք անցել նշված հարցի կողքով։

Մենագրության մեջ բացատրված է, թե ինչպես ենք հաշվարկել գյուղացու միջին հողաբաժնի չափը, որը որոշ մասով պակաս է պրոֆ. Գ. Շառոյանի ստացած տվյալներից։ Մենք հաշվի ենք առել հանրապետության հողժողկոմատի այն վերապահություն-տեղեկությունը, թե գոյություն ունեցող տվյալները հողաբաժանության ժամանակ պակասում են մինչև 15%-ով (հոգուտ արոտավայրերի և ոչ պիտանի հողերի), այդ պատճառով էլ լեռնային շրջաններում շատ վարելահողեր, որպես այդպիսին, անպետք են և «գյուղացիությունը, իրավացիորեն, հրաժարվում է դրանք իբրև հողաբաժին ընդունելուց»[6]։ Ընդհանուր տվյալներից հանել ենք նաև Երևան և Լենինական քաղաքների հողային տարածությունները։ Այս եղանակով աշխատել ենք պարզել գյուղացու իրական հողաբաժինը։

Ճիշտ կլիներ, եթե հարգելի պրոֆեսորը քններ այն հարցը, թե որքանով է ճիշտ կամ սխալ մեր նման մոտեցումը, ինչպես նաև՝ իր կողմից դրա անտեսումը։ Դրա փոխարեն նա միայն հայտարարում է, թե, իբր, մենք շրջանառության մեջ ենք դրել սխալ տվյալներ։

Պրոֆ. Գ. Շառոյանը սխալ է համարում մեր այն տեսակետը, որը վերաբերում է կալվածատիրական հողատիրության սահմանափակության գնահատությանը։ Նա դրանով փաստորեն ժխտում է Հայաստանի ագրարային վերափոխումների առանձնահատկությունները և դժվարությունները, որի հետ համաձայնել չենք կարող։ Տեղին է հիշեցնել Վ. Ի. Լենինի խոսքերը Սիբիրի գյուղացիության մասին, որի ֆեոդալական հողատիրության պայմանները, մեր կարծիքով, բավական նման էին Հայաստանին։ Այնտեղ ևս կային ոչ մեծաքանակ խոշոր մասնավոր կալվածքներ և վանքապատկան հողեր[7]։ «Մենք չէինք կարող,— գրել է Վ. Ի. Լենինը,— Սիբիրում գյուղացիներին տալ այն, ինչ որ հեղափոխությունը Ռուսաստանում տվեց նրանց։ Գյուղացիությունը Սիբիրում կալվածատիրական հող չստացավ, որովհետև այնտեղ չկար այն»[8]։ Մի այլ դեպքում նա նշել է. «Սիբիրի գյուղացիները ճորտական իրավունքին անծանոթ են եղել... Դա այն գյուղացիներն են, որոնք հեղափոխությունից լավացում չեն տեսել»[9]։

Հայաստանի կոմկուսի I համագումարում (1922 թ. հունվար) խոսելով գյուղացիության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին, Ա. Մռավյանն ասաց. «Գյուղացիության հետ մեր փոխհարաբերությունների մեջ պետք

---

4 Նույն տեղում, էջ 157։

5 Նույն տեղում։

6 «Խորհրդային Հայաստան. հինգ տարի. 1920—1925», Երևան, 1926, էջ 107։

7 «История социалистической экономики СССР», т. I, М., 1976, стр. 79.

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 149—150։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 572։

է գտնել որոշակի հիմք։ Ռուսաստանում այդ հիմքը կա, դա հողը գյուղացիներին հանձնելն է (նկատի ունի կալվածատիրական հողը— Վ. Ղ.)։ Մենք այստեղ չկարողացանք դա անել»[10]։ Իսկ հողժողկոմ Ա. Երզնկյանը, որի անմիջական ղեկավարությամբ կենսագործվում էր Հողի մասին դեկրետը, հանրապետության սովետների I համագումարում պարզաբանում էր, որ մեզ մոտ հողային հարցի լուծումը այլ բնույթ է կրում, քան Ռուսաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, որ Հայաստանի հողային պայմաններն այլ են, քանի որ այնտեղ բացակայում է խոշոր կալվածատիրությունը, բացառյալ եկեղեցին և վանքերը, որոնք դարձյալ մի չնչին մեծություն են Ռուսաստանի կալվածատիրության հետ համեմատած[11]։ «Հայաստանը պատկանում է այն սակավաթիվ երկրների շարքին,— կարդում ենք հողժողկոմատի վավերագրերից մեկում,— ուր համարյա բացակայել են խոշոր կալվածատիրական, պետական և այլ տնտեսությունները...։ Գոյություն են ունեցել մի քանի միջակ և նույնիսկ միջակից էլ ցածր կալվածատիրական տնտեսություններ, որոնք երկրի ընդհանուր տնտեսության մեջ շատ աննշան տեղ են գրավել»[12]։ Հանրապետության հողժողկոմատի 1920—1925 թթ. հաշվետվության մեջ արձանագրված է. «Հայաստանում հողերի բռնագրավումը (խոսքը կալվածատիրական հողերի մասին է— Վ. Ղ.) չտվեց այն արդյունքը, ինչ որ մյուս հանրապետություններում։ Նա ավելի շատ սկզբունքային, քան որևէ էական տընտեսական նշանակություն ունեցավ սակավահող գյուղացիության շահերի տեսակետից»[13]։

Հաշվի առնելով այդ ամենը, մենք գրել ենք, որ «ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում մեծ տարածում չուներ, հետևաբար այդ իմաստով այստեղ բուրժուա-դեմոկրատական հեղափոխական միջոցառումները մեծ տեսակարար կշիռ չեն ունեցել և էական դեր չեն խաղացել ագրարային վերափոխումների մեջ»[14]։ Նույն տեսակետը մի այլ տեղ արտահայտել ենք հետևյալ կերպ. «Հայաստանի պայմանների այս առանձնահատկությունը չէր կարող չազդել և անխուսափելի կերպով իր կնիքը դրեց հողային վերափոխումների ընթացքի և արդյունքների ու, ընդհանրապես, գյուղի սոցիալ-տընտեսական զարգացման վրա»[15]։

Հայաստանի ագրարային վերափոխումների առանձնահատկությունները և դժվարությունները ցույց տվող այս ձևակերպումներին դեմ է պրոֆ. Գ. Շառոյանը։ Սակայն մեր տեսակետը բաժանում են նաև այլ հետազոտողներ։ Այսպես, ՍՍՀՄ սոցիալիստական էկոնոմիկայի պատմությանը նվիրված բազմահատոր ծանրակշիռ ուսումնասիրության մեջ Սովետական Հայաստանի հողային դեկրետի հիշատակումից հետո գրված է հետևյալը. «Սակայն գյուղացիության ուժեղ հողազրկության և սակավահողության պայմաններում խոշոր կալվածային հողատիրության բացակայությունը դժվարացնում էր ագ-

---

10 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 232, թ. 32—33։

11 «ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների խորհուրդների առաջին համագումարը», Երևան, 1922, էջ 23։

12 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական Կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 123, ց. 5, գ. 331, թ. 1։

13 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ց. 16, գ. 258, թ. 4։

14 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 18։

15 Նույն տեղում, էջ 113։

բարային հարցի լուծումը հանրապետությունում»[16]։ Սա ասված է ուսումնասիրության համապատասխան հատորի այն ենթագլխում, որը վերնագրված է՝ «Ագրարային վերափոխումների առանձնահատկությունները ազգային հանրապետություններում և տնտեսական շրջաններում»։

Պրոֆ. Գ. Շառոյանի հոդվածում կատարված լենինյան մեջբերումների առթիվ պետք է ասել, որ դրանք վերաբերում են միայն հեղափոխական պայքարի միջոցով ֆեոդալիզմն ու ճորտատիրության մնացորդները վերացնելու անհրաժեշտությանն ու նշանակությանը և բնավ չեն ժխտում սովետական ագրարային վերափոխումների առանձնահատկությունների ու տարբերությունների հնարավորությունը։ Ընդհակառակը, ինչպես վերևում ցույց տրվեց, Վ. Ի. Լենինը Սիբիրի օրինակով խոսել է հենց այդպիսի հնարավորության մասին։

Իր աշխատության մեջ պրոֆ. Գ. Շառոյանը 1921—1922 թթ. առանձնացրել է որպես ագրարային վերափոխումների առաջին փուլ, «հողային հարաբերությունների անցման մի ժամանակաշրջան», երբ միաժամանակ կիրառվել են դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխական միջոցառումներ[17]։ Առարկելով նրան, մենք նշել ենք, որ այդ տարիները սոցիալիստական հեղափոխական միջոցառումների տեսակետից չի կարելի առանձնացնել, քանի որ դրանք, այսինքն, հիմնականում կուլակային նորմայից ավելի հողի գրավումները կամ վերցնելը իրագործվել է երկար տարիների ընթացքում, ընդհուպ մինչև 1926—1927 թթ., քանի դեռ շարունակվում էր գյուղի ներքին հողաբաժանությունը։ Ճիշտ է, 1921—1922 թթ. եղել են կուլակային շնչաբաժին նորմայից ավելի հողի գրավումներ, սակայն դրանք այնպիսի ծավալ ու չափեր չեն ընդունել կամ էապես չեն տարբերվել հետագա տարիների գործողություններից, որպեսզի հնարավոր լիներ խոսել հողային հարաբերությունների ինչ որ «անցման ժամանակաշրջանի» մասին։

Չհամաձայնվելով հարգելի պրոֆեսորի հետ, մենք դրել ենք նաև այն մասին, որ նա մեխանիկական համեմատություն է կատարել Հայաստանի և Ռուսաստանի ագրարային վերափոխումների միջև, որտեղ դեմոկրատական և սոցիալիստական կամ համագյուղացիական և հակակուլակային խնդիրների լուծումները առանձնանում են որպես երկու ինքնուրույն փուլեր (1918 թ.)։ Միայն ի տարբերություն Ռուսաստանի, պրոֆ. Գ. Շառոյանը Հայաստանի համար դրանք միավորում է մի ընդհանուր փուլի մեջ (1921—1922 թթ.)։

Կուլակների մասնակի ունեզրկումը սոցիալիստական հեղափոխական միջոցառում է, որը մենք չենք ժխտել։ Մեր առարկությունը վերաբերում է միայն բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխական միջոցառումները մեկ ժամանակաշրջանի մեջ միավորելուն։

Պրոֆ. Գ. Շառոյանը մեզ քննադատում է այն բանի համար, որ մենք հողաբաժանության ձևերի հարցը քննելիս առավելություն ենք տվել սոսկ հավասարեցմանը՝ ընդհանուր վերաբաժանության նկատմամբ և այդ խնդրում պաշտպանել ենք հողժողկոմի տեղակալ Ս. Շադունցի տեսակետը, որը տվյալ դեպքում ներկայացրել է հողժողկոմատի կարծիքը։

---

16 «История социалистической экономики СССР», т. 1, стр. 76.

17 Գ. Շառոյան, Գյուղի ներքին հողաբաժանությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1965, էջ 83, 88։

Սովետական հողային օրենսդրությունը թույլատրում էր հողաբաժանության երկու եղանակն էլ, որոնք ունեին իրենց և դրական, և բացասական կողմերը, սակայն պատմական կոնկրետ պայմաններում սոսկ հավասարեցումն ուներ ավելի շատ առավելություններ։ Ուստի պատահական չէ, որ հողային մարմիններն աշխատում էին հիմնականում անցկացնել հողաբաժանության այդ ձևը։ Գիտական ուսումնասիրությունները վկայում են, որ Սովետական Միությունում ավելի շատ կիրառվել է հենց այդ եղանակը։ Այդպիսի եզրակացության է հանգել Գ. Շարապովը՝ Սովետական Ռուսաստանի[18], Մ. Սահրադյանը՝ Սարատովի նահանգի[19], Ա. Պոլոսան՝ տափաստանային Ուկրաինայի[20] վերաբերյալ։ Վերջինս գրում է, որ հողային մարմինները նպաստում էին հողի հավասարեցման անցկացմանը և խիստ կերպով արգելում էին այսպես կոչված «սև վերաբաժանությունը», որը թույլատրվում էր միայն բացառիկ դեպքերում՝ ունևոր գյուղերում (օրինակ, Նիկոլաևի նահանգ)[21]։ «Հավասարար հողօգտագործման հաստատման երկրորդ ձևը (նկատի ունի հողահավասարեցումը, ավելին կտրելու և պակասը լրացնելու միջոցով, առանց գյուղացու նախկին հողաբաժինը վերաբաժանելու— Վ. Ղ.), որպես կանոն, գերակշռում էր»[22]— կարդում ենք վերոհիշյալ բազմահատոր ուսումնասիրության մեջ Սովետական Միությունում հողային դեկրետի կենսագործման առթիվ։

Հայաստանի հողային մարմինները, հաշվի առնելով մյուս հանրապետությունների փորձը, աշխատում էին մեզ մոտ ևս հիմնականում իրագործել հողաբաժանության սոսկ հավասարեցման ձևը։ «Շնչերին հասանելիք նորմայի սահմաններում և ըստ կատեգորիաների հողակտորները թողնվում են նախկին տերերի ձեռքին»[23],— ասված է հանրապետության գյուղատնտեսական առաջին համագումարում (1922 թ. նոյեմբեր)։ Կարող ենք բերել նաև Ալեքսանդրապոլի գավառի օրինակը, որտեղ հողաբաժանության տվյալ եղանակը ստացել էր որոշման ուժ։ Գավգործկոմի կողմից հաստատված (1923 թ. մարտ) «Գավառի գյուղերում ներքին հողահավասարեցում կատարելու ժամանակավոր կանոնադրության» մեջ ասված է. «Գյուղական տնտեսության ամբողջ հողը (որտեղ գոյություն ունի համայնական հողօգտագործում— Վ. Ղ.) ենթակա չէ բաժանման, միայն ենթակա են բաժանման նորմայից ավելի կամ պակաս հողամասերը, ըստ որակի և քանակի...»[24]։

Մենք ճիշտ ենք համարում այն գնահատականը, որը տրված է մեր գրքում. «Հողաբաժանության սոսկ հավասարեցման եղանակը ավելի շատ առավելություններ ուներ, և ավելի էր համապատասխանում նոր տնտեսական քաղաքականության ժամանակ կենսագործվող կայուն հողօգտագործման, գյուղատնտեսության վերականգնման և գյուղի արտադրողական ուժերի զարգացման շահերին»[25]։

---

18 Г. Шарапов, Разрешение аграрного вопроса в России после победы Октябрьской революции, М., 1961, стр. 136—137.

19 «Проблемы аграрной истории Советского общества. Материалы научной конференции. 9—12 июня 1969 г.», М., 1971, стр. 88.

20 Նույն տեղում, էջ 42։

21 Նույն տեղում։

22 «История социалистической экономики СССР», т. 1, стр. 70

23 ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 16, գ. 31, թ. 38։

24 ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ց. 1, գ. 67, թ. 112։

25 Վ. Ղազախեցյան, Նշվ. աշխ., էջ 136։

Մենք չեսք անտեսել նաև հողաբաժանության ժամանակ սխալներ թույլ տալու, չքավորների շահերը անտեսելու հնարավորությունը։ Ընդ որում, այդպիսիք լինում էին բոլոր դեպքերում, անկախ հողաբաժանության ձևից։ «Հողաբաժանության ժամանակ դժգոհություն և բողոք լինելու դեպքում հողժողկոմատը վարվում էր հետևյալ կերպ։ Եթե թույլ էին տրվել կոպիտ խախտումներ, ապա թույլատրվում էր կատարել նոր վերաբաժանություն։ Այլ դեպքերում նա ղեկավարվում էր կայուն հողօգտագործումը չխախտելու սկզբունքով, սխալների և թերությունների վերացումը հետաձգելով մինչև հիմնական հողաշինարարությունը։ Սկզբունքորեն ճիշտ լինելով, հողժողկոմատը երբեմն թույլ էր տալիս նաև սխալներ ու վրիպումներ, օբյեկտիվորեն անտեսելով չքավոր գյուղացիների շահերը»[26]։

Կոմունիստական կուսակցության ագրարային քաղաքականությունը հենվում էր դասակարգային սկզբունքի վրա, որը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ընդունում էր կոնկրետ ձև։ Այսպես, մինչև կուսակցության XV համագումարը այն արտահայտվում էր հետևյալ կերպ։ Չքավոր գյուղացիների շահերի պաշտպանությունը և կուլակության դեմ պայքարը իր արտահայտությունը գտավ նախ և առաջ հողը ըստ շնչի բաժանելու սկզբունքի մեջ։ Այնուհետև, չքավորներն ազատվում էին գյուղատնտեսական միասնական հարկից։ Կազմակերպվեց աշխատավոր գյուղացիության վարկավորման գործը։ Կոոպերացիայի միջոցով չքավորը, ապա միջակ գյուղացիները ստանում էին նաև այլ օգնություն։ Թույլատրվեց հողի աշխատավորական վարձակալությունը և օժանդակ բանվորական ուժի վարձակալումը։ Միջոցառումներ մշակվեցին բատրակների շահերի պաշտպանության ուղղությամբ և այլն։

Ինչ վերաբերում է հողի որակի և մոտիկության նկատմամբ դասակարգային սկզբունքին, ապա այն առաջ է քաշվել միայն կուսակցության XV համագումարի որոշումներում[27] և դրանց հիման վրա մշակված և ընդունված նոր հողային օրենսդրության մեջ («Հողօգտագործման և հողաշինարարության ընդհանուր հիմունքները»)[28], այսինքն այն ժամանակ, երբ Հայաստանում, ինչպես նաև սովետական մյուս հանրապետություններում հողաբաժանությունը, իր բոլոր ձևերով, արդեն կատարված փաստ էր։ Այս նոր մոտեցումը Հայաստանում իր գործնական արտահայտությունը գտավ հիմնական ներքին հողաշինարարության մեջ, որի մասին խոսվում է նաև մեր գրքում[29]։

1929 թ. հանրապետության ղեկավար մարմինները զեկուցագիր են պատրաստել 1922—1929 թթ. կենսագործված հողաշինարարության արդյունքների մասին, ԽՍՀՄ Աշխատանքի և պաշտպանության խորհրդին ներկայացնելու համար։ Նրանում նշված է, որ մինչ 1928 թ., հողային օրենսգրքի համաձայն, «տվյալ հողային հասարակության ամբողջ բնակչությունը հողաբաժին է ստացել բոլորովին միատեսակ պայմաններում՝ ինչպես հողի քանակի ու որակի, այնպես էլ հողամասերի տեղադրության նկատմամբ։ 1928 թ. սկսած, ղեկավար կուսակցական ու սովետական մարմինների դիրեկտիվների համաձայն,

---

26 Նույն տեղում։

27 «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», մաս II, Երևան, 1955, էջ 613։

28 «Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства. 1927—1935», М., 1957, стр. 96—108.

29 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 191—199։

հողաշինարարության ժամանակ անց է կացվում կտրուկ դասակարգային մոտեցում...»[30]։

Հետաքրքիր է այն կարծիքը, որ արտահայտված է հիշյալ զեկուցագրի նյութերում, ընդհանուր հողաբաժանության մասին։ «1928 թ.,— կարդում ենք այնտեղ,— արգելված է վիճակով հողաբաժանության սիստեմը և հարմար տեղադրված, ջրով ու ճանապարհների ցանցով ապահովված լավագույն հողերը տրամադրվում են կոլտնտեսություններին ու գյուղի չքավորա-միջակային շերտերին»[31]։ Նշանակում է, եթե մինչև XV համագումարը ընդհանուր վերաբաժանությունը, որպես հողաբաժանության ձև, թույլատրվում էր, ապա դրանից հետո այն բացառվեց։

Այսպիսով, հողաբաժանության սոսկ հավասարեցման եղանակի վերաբերյալ մեր կարծիքը համապատասխանում է ռեալ իրականությանը և բխում է սկզբնաղբյուրների ու նյութերի օբյեկտիվ վերլուծությունից։ Միաժամանակ այն եղել է ոչ թե հողժողկոմի տեղական մասնավոր կարծիքը, այլ հողային մարմինների գործելակերպը, ընդ որում՝ ոչ միայն Հայաստանում, այլև մյուս հանրապետություններում։

Տվյալ հարցում վեճը սպառած լինելու համար ավելացնենք, որ հողի ո՛չ սոսկ հավասարեցումը, ո՛չ էլ ընդհանուր վերաբաժանությունը իսկական առավելություն չունեն։ Այստեղ խոսքը միայն հարաբերական առավելության մասին է։ Իրական գերապատվությունը տրվում է միայն կոլեկտիվ հողագործությանը։ Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, թե պետք է գնալ այն ուղիով, «որը տանում է դեպի հողի ընդհանուր մշակումն առանց կապիտալիստների, առանց կալվածատերերի։ Միայն այդ ուղին կիրականացնի հողի իսկական անցումն աշխատավորների ձեռքը»[32]։ Զմոռանալով լենինյան այս խոսքերը, նշենք, որ դրանք ճիշտ չեն օգտագործվել բանավեճային հոդվածում, երբ փորձ է արվել «ապացուցելու» մեր սխալականությունը։

Անցնենք «համատարած» միջակացման հարցին։ Նախ և առաջ ճշտենք, որ մենք ոչ թե չենք ընդունել այն, այլ նշել ենք, որ պրոֆ. Գ. Շառոյանը չափազանցել է հողաշինարարության և հողաբաժանության դերը գյուղի միջակացման գործում[33]։ Եթե միջակացումը վերցնենք միայն հողապահովվածության առումով, ապա այս տեսակետից ևս դրությունն այդպիսին չէր։ 1920-ական թվականների վերջին, երբ սովետահայ գյուղը թևակոխում էր գյուղատնտեսության մասսայական կոլեկտիվացման ժամանակաշրջանը և լրանում էր Հայաստանում հողային դեկրետի ընդունման 10-ամյակը, տասնյակ հազարավոր գյուղացիներ դեռևս հողազուրկ էին, որովհետև բաժանելու հող այլևս չկար։ Այս փաստը արձանագրում է նաև պրոֆ. Գ. Շառոյանը, գրելով՝ «չհաշված հողազուրկ հայ գաղթականներին»։ Կարծում ենք, որ 40 հազար հայ գաղթականներին, որոնք ավելի քան տասը տարի մեր գյուղի բնակիչներն էին, «չհաշվել» չի կարելի։ Հենց այդ վերապահությունը ժխտում է «համատարած» միջակացման մասին Գ. Շառոյանի տեսակետը՝ թեկուզ միայն հողապահովվածության առումով։ Էլ չենք խոսում այն տասնյակ հազարավոր սակավահող գյուղացիների մասին, որոնց հողաբաժնի ավելացումը

30 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 123, ց. 16, գ. 641ա, թ. 11։

31 Նույն տեղում, թ. 14։

32 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 640։

33 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 22, Գ. Շառոյան, նշվ. աշխ., էջ 106, 220։

կենսական անհրաժեշտություն էր և պաշտոնապես ճանաչված հողային ու մյուս մարմինների կողմից։

Բացի այդ, երբ Վ. Ի. Լենինը խոսում էր Սովետական Ռուսաստանի գյուղի միջակացման մասին, հողահավասարեցումից բացի նկատի ուներ նաև ցանքի գծով միջակացումը։ «Վիճակագրական տվյալները,— գրել է Վ. Ի. Լենինը,—միանգամայն անվիճելի կերպով ցույց են տալիս, որ գյուղը համահարթվել, հավասարվել է, այսինքն՝ սուր բաժանումը դեպի կուլակի կողմը ու ցանքազուրկ գյուղացու կողմը հարթվել է։ Ամեն ինչ ավելի հարթ է դարձել, գյուղացիությունն ընդհանուր առմամբ միջակ գյուղացու դրության է անցել»[34]։

Սովետական Հայաստանում 1926 թ. (երբ հողաբաժանությունը հիմնականում ավարտվել էր) գյուղացիական բոլոր տնտեսությունների 16%-ը ցանքագուրկ էր, իսկ մոտ 34%-ը ուներ մինչև մեկ դեսյատին ցանք[35]։ Սրանց մեծ մասն անկասկած չքավոր գյուղացիներ էին։

Այսպիսի փաստերից է բխել մեր եզրակացությունը հողաբաժանության շնորհիվ իբր տեղի ունեցած «համատարած» միջակացման մասին։

Մեր աշխատության մեջ ցույց է տրված, որ սովետահայ գյուղը ևս միջականում էր, սակայն, ի տարբերություն Սովետական Միության շատ շրջանների, նրա ընթացքը ավելի դանդաղ էր։ Գրքում տրված են նաև դրա պատճառները։

Այժմ «հավասարարությունից» գյուղացիության հիասթափվելու մասին։ Իր գրքում պրոֆ. Գ. Շառոյանը գրել է. «Գյուղի հիմնական ներքին հողաշինարարության էտապում (1926—1929 թթ.— Վ. Ղ.) Հայաստանի գյուղացիության չքավոր և առաջավոր խավերը հիասթափվելով «հավասարարությունից»՝ հեռանում են հողի համայնական վերաբաժանման ձևից և սկսում են անցնել հողի սոցիալիստական օգտագործման եղանակին»[36]։ Մենք առարկել ենք նրան, ցույց տալով, որ հիմնական հողաշինարարության առաջին երկու տարիներին՝ 1926—1927 թթ. «հավասարարությունից» հիասթափված Հայաստանի աշխատավոր գյուղացին դեռևս կոլտնտեսությունների կազմակերպմանը չէր դիմում։ Սա պատմական ճշմարտություն է, իրական փաստ։ Հայաստանում կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն սկսվել է միայն կուսակցության XV համագումարից հետո, սկսած 1928 թ. հունվարից։ Բացի այդ, մենք ճիշտ կերպով ցույց ենք տվել, որ սոցիալիստական հողօգտագործմանն անցնելը միայն «հավասարարությունից» գյուղացիության հիասթափվելով չպետք է բացատրել, որ դա կուսակցության բազմակողմանի գործունեության արդյունքն է։

Այս հարցում, սակայն, ճիշտ է նաև պրոֆ. Գ. Շառոյանը, երբ նա նկատում է մեր հակասական ձևակերպումները, որն անուշադրության արդյունք է։

Վերջապես «ագրարային հեղափոխություն» տերմինի մասին։ Այս տերմինի օգտագործման դեմ արտահայտվելով, մենք ցանկացել ենք տեսնել այն տարբերությունը, որը գոյություն ուներ ագրարային վերափոխում-

---

34 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 265։
35 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 229։
36 Գ. Շառոյան, նշվ. աշխ., էջ 219։

ների ձևերի ու արդյունքների միջև Սովետական Ռուսաստանում և Սովետական Հայաստանում։ Հայաստանում հողի մասին դեկրետի կենսագործումն ուներ բավական առանձնահատուկ կողմեր, որոնց մասին փաստորեն խոսք եղավ նաև սույն հոդվածում։ Այնուամենայնիվ կարծում ենք, որ ճիշտ չի եղել մեր առարկությունը, մանավանդ որ դրա հետ մեկտեղ ինքներս «հողային հեղափոխություն» տերմինը մի դեպքում պահպանել ենք՝ դնահատելու համար վերականգնման տարիներին հողային հարցի լուծման հանրադումարները[37]։

Մենք միաժամանակ նաև այն կարծիքին ենք, որ կարևորը տերմինը չէ, այլ այն, թե ինչ բովանդակություն ենք դնում դրա մեջ՝ կոչվի այն «ագրարային հեղափոխություն», թե «ագրարային վերափոխումներ»։

ЕЩЕ РАЗ К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ АГРАРНЫХ ПРЕОБРАЗОВАНИЙ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

ВЛАДИМИР КАЗАХЕЦЯН

Резюме

В статье проф. Г. Шароянa, опубликованной в порядке обсуждения в № 8 журнала, содержатся критические замечания по ряду вопросов аграрных преобразований в Советской Армении. Однако часть этих замечаний весьма неубедительна. Неверно его утверждение о том, что нами якобы игнорирована или лишь бегло затронута высказанная в свое время ошибочная версия, согласно которой аграрный вопрос в Армении был разрешен за счет середняцкого крестьянства.

Проф. Г. Шароян, по существу, отрицает особенности аграрных преобразований в республике. Ограниченность крупного и вообще помещичьего землевладения затрудняла решение аграрного вопроса. Необоснованно выделение 1921—1922 гг. в отдельный этап или переходный период аграрных отношений.

Как во многих районах страны, так и в Армении форма простого уравнения раздела земли преобладала над общим переделом; она отвечала интересам установления устойчивого землепользования и восстановления разоренного сельского хозяйства. На наш взгляд, проф. Г. Шароян преувеличивает роль землеустройства и раздела земли в «сплошном» осереднячивании села.

Проф. Г. Шароян прав, указывая, что наши формулировки относительно темпов коллективизации в 1928—1929 гг. не совсем четки. Он прав также в вопросе об употреблении термина «аграрная революция». Отметим, однако, что мы не видим различий между терминами «аграрная революция» и «аграрные преобразования».

---

37 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 153։